

Հ. Ա. Բ. Հ.
Ա. Թ. Ժ. Ո. Վ. Ա. Տ.

ԵՅ ԽԵՆԱ ԿԱՐԱ ԵՅ

Ա. ԴԱՐԲԻՆՅԱՆ

ՃՈՒԼԿՈՒՑԸ

(ՃՈՒԼԿՈՒՑԸ)

891.99
7-26

19. ՊԵՏԱԿԱՆ ՀԱՅ

==== ՅԵՐԵՎԱՆ ====

ԺԼԿՈՒՏԸ

(ՃԱՀՃՈՒՏԸ)

Տնեւոււն վոր ման գայիր, գույնը տեղը մարդ
չեյիր գտնի գյուղում:

Բոլորի գեմքը գեղին երնոր զալիր գցած ժոմի
պես, ականջներն սպիտակ-մեկ որական լուսնի նման,
աչքերը՝ սովորականից ավելի դուրս ընկած խոռոչ-
ներից, վրայի կարմիր արնաթելերը ցամաքած, կապ-
տած, բնի մեջ թեք ընկած ծիծեռնակի ձվի պես, բե-
րերն անիայլ, պղտոր, վրան փառ քաշած ճահճի ջրի
նման: Հայացքը՝ խամրած, անորոշ: Թվում եր, թե
հետդ խոսողի ուղեղը քարացել ե, միտքը չի գործում:

Պատանիների գեմքը վաղաժամ ակոսված, թեժ
ժոխրի մեջ խորոված սերկեվլի կրեպի նման կնճոռ-
տած, վիզն այնքան բարակ, վոր գլուխը կարծես տանձ
լիներ, գլխավայր հենված եր կոթին: Այտոսկրները
ցցած-լղար ձիու գավակի նման, կղակը սեպի պես
տափակ ու սուր, վոր շարունակ դողդողում եր վորմ-
ե բառ արտասահնելիս:

Ատամները չխչխկում են ծնոտի թուլությունից,
յերբեմն լեզվի ծայրը կծելով: Տերանից անախորժ հոտ
է զալիս: Շրթունքները բարակ են, լեղակի գույնի,
ծալպալով հաղիվ են բաժանվում իրարից՝ խոսելիս,
վորի միջոցին յերեկում և ցամաքած փրփուր, բերանի



14202-58

ԳԵՂԱՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ

Գատվեր 996 Գրառեպվար 6207 (բ) Տիրաժ 4000

անկյուններում, բորբոսնի նման։ Եզրուն թխված, կարծես թեժ հարթուկով մրկած լինի։ Կոկորդը ցամաքած, ձայնը շարունակ խզվում է, շունչը մոլորվում, կըտրում։

Պատանին յերկար կանգնել չի կարող. գլուխը պատում է, սիրոն անկանոն բարախում, ծնկները ծալվում են։ Ամառվա շոդին ել՝ վրան գցած էին, փաւաս դառած վերարկուն կամ չուխան ուղղում է, ներողություն ինդրում, վոր չի կարող «վոտի վրա» խոռոշել և տեղն ու տեղը նստում է։

— Կրաշխես, քիչ տկար եմ։

Ցեղ աս 19-20 տարեկան պատանի յե, յերիտասարդությունը թեշվակոխած։

Փոքրերը-կարծես իրենց փորը հազիվ ման ածող նորելուկ ճուտեր լինեն-հավի կամ սագի։ Հակվում են այս ու այն կողմ, շարունակ ինչվոր բան կոծում։

Վտիտ են, իրենց տարիքին համապատասխան տեսքով, չզարդացած անդամներով։ Փորն ուռած, դուրս ընկած, կարծես ջրով լիքը տիկ լինի լըկը կալիս։ Ծծից կտրելու որից սկսած՝ պայքարում են հիվանդության դեմ, բայց չեն դիմանում. անիվի տակ ընկած դալար շյուղի նման փոփում են գետնով մին, թառամում, դառնում սև հողի բաժին։

Մերունի կամ պառավ շատ քիչ կա. գլուխը ճերմակ մարդ-մատներով են հաշվում։

Ցեղե չասենք ամեն որ, գոնե շաբաթական յերկու մեռել եր մտնում գերեզմանատուն։ Մեռնողների մեծ մասը յերեխաներ եյին կամ պատանիներ։

Պատմում են, թե ինչպես մի ամառ որական յերկու-յերեք հոգի յեն թաղելիս յեղել։ Գյուղացիք գե-

րեզմանափորների հետ պայմանավորվում են, վոր յեթե իրենք հեռվից կանչեն ու ասեն—«տեղ կա», բերեզմանափորները պատասխանեն—«տեղ չկա, ել մի՛ բերեք», —մի գուցե դրանով վերջ կլինի ժահացության տարերքին, բայց գերեզմանափորներից մեկը մոռանալով պատվերը, պատասխանում ե—չատ կա, տեղ շատ կա, բերե՛ք»։

Պատմում են այս դեպքը և ծիծաղում գերեզմանափորների վրա, վորն իր կյանքում շատ առատաձեռն մարդ ե յեղել։

Հարեվան գյուղերը խուսափել են աղջիկ մարդու տալուց այս դյուղին։ «Ենա իմ ճեռովն եստեղ կթաղեմ աղջիկս, ել ինչի՞ յեմ ճեզ տալի»—ասել են ինամախուսին ու մերժել, թեև փեսացուն շատ ունեվոր ե յեղել ու ջահել։

Քանի՞-քանի անգամ գյուղացիք ժողով են արել, խոսել, քնել, վոր գյուղը թողեն, քոչեն, հեռանան, բայց խոսքը-խոսք ել մնացել ե, վոչ վոք չի կամեցել իր մրգառատ ու խաղողի այգին թողնի, իր ջրովի հողիցն ու պարտեղիցը հրաժարվի։

Ու մնացել են, կիսաշան ապրել, անիծելով իրենց ու որն ու բախտը։

* * *

Այնտեղ, ուր սարը հավաքում ե իր կանաչ փեշերը և բացվում ե լերկ լանջից, հենց այդ լանջից քիչ ցած, մի շեկ ու մոխրագույն վլվածք-բլրի տակ ծվարել ե գյուղը։ Տները գետնափոր, հեռվից խոռոչների յեն նմանվում, անշուք, անիփայլ, ամառը փոշով ծածկը-ված, մյուս յեղանակներին ցեխի մեջ կորած, իսկ տը-

ների մոտ կուտակված ոմաղբի-վեյինի մեջ
վոտք կկոտրի:

Գյուղի առաջով հոսում և պղտոր գետը, վորի ամ-
բողջ յերկարությամբ, յերկու կողմից ձգված են այ-
դիները և բանջարանոցները, ապա վարելահողերը:

«Հողը-վոսկի յե» այստեղ, ինչ սերմ գետին գցես,
կաճի, կղարդանա, փարթամ տեսք կունենա: Խաղո-
ղից սկսած-ինչպիսի միրդ կամ պտուղ սիրտով ուղի՝
այստեղ կա, լի, առատ, համով: Կեռասն ու թութը
հենց վոր աչք բանան, շրջանի գյուղերից կթափեն
այստեղ կա, լի, առատ, համով: Կեռասն ու թութը
խնձորենիները, տանձենիները, սերկելլիները և այլն
ծառեր, զննակոտոր են լինում բերքի ծանրությունից,
թվում ե, թե միրդը տերեկից շատ ե:

Գետից առուներ են անց կացրել նաև դեղի վարե-
լահողերը, վորոնք պարարտ են, բերքատու: Յեթե ու-
րիշ գյուղերում հողը մեկին-հինդ կամ վեց և տալիս,
այստեղ մեկին-քսան-յերեսուն: Արտը մարդաբոյ,
հասկերը տրուղ, հատիկները խոչոր: Արտը յերբ
«հորանց և զնում», կարծես ծովին և լվլիում թեթև քա-
մուց: Հողը պարարտացնելու կարիք չի զդում, պա-
րարտանյութ պետք չե: զետը սարերից ու ձորերից,
վերի գյուղերից ու գոմերից սկում, բերում ե հաղար
ու մի տեսակի պարարտանյութ, փուում այդիներում
ու դաշտերում: «Գետը-վոսկի յե բերում»: Բայց . . .

Բայց այդիների ու դաշտերի ծայրամասերում, ա-
ռուների ու գետափի ծանծաղուտ տեղերում բազմաթիվ
ճահիճներ կան, վորոնցից ամենամեծը — ճկուտը ըստ-
նել ե-մոտ յերեք օրավար տեղ: Զուրն այստեղ հարյու-
րավոր տարիների ընթացքում լծացել ե, տիղմը շերտ-

չերտ նստել: Յեղեգնուաս և անանցանելի, կամ ինչպէս
տեղացիներն են ասում—«ղամշկուտ», «ղարղվի քոլ»,
«գորտերի դաշա»: Սակայն միայն գորտերը չեն ճկուտի
բնակլիչները. այստեղ վխտում են ամեն տեսակի ճահ-
ճային կենդանիներ ու բգեղներ, իսկ ամենից թու-
նավորը նրանցից, ջերմ ու տենդի-մալարիայի մո-
ծակը:

Ժամանակով, ինչ-վոր ոռւս անցվորական կանգ է
առել գյուղում, հիացել փարթամ այդիներով ու դաշ-
տերով, բայց ճկուտի մասին ասել ե. «յեթե դուք այդ
ճահճի գլուխը չուտեք, նա ձեր գյուղի գլուխը կուտի»:
Ասել ե ու անցել առանց կարգին բացատրելու իր միտ-
քը, իսկ գյուղացիք ծիծալել են, ծաղրել շաշ ուսում-
նականին և . . .

Յեկ տարիներ շարունակ զոհեր տվել ճկուտին,
վորն իրոք քիչ եր մնում «զյուղի գլուխն ուտի»:

* * *

Խորհրդային իշխանության առաջին անելիքներից
մեկն այն յեղավ, վոր գյուղում գպրոց բաց արեց:
Բայց, ինչպես ասում են, «շարաթն ուրբաթից չուտ
յեկավ»: Վարժապետը գյուղ մտնելուց մի շարաթ անց,
հիվանդացավ մալարիայով ու զնաց:

Ասենք, առաջ ել այդպիսի մի գեպք եր պատահել:
Գյուղացիք մի տարի գպրոց եյին բաց արել, բայց
գպրոցը դպրոց չեր յեղել, այլ կատարյալ հիվանդա-
նոց: Եղ որից ել, գյուղը վորոշել եր այլսս «անտեղի
փառ ջուրը չթափել»:

«Սս իշխանությունը թե զոչաղ ա, թող ես ցավի,
ես կտարածի առաջն առնի», ասում եյին գյուղացիք
տմեն ժողովում:

Իշխանությունը ըրջանի կենտրոնում բայ արժեց հիվանդանոց, յերթեկեկ հիվանդների համար: Սա արդեն միանգամայն նոր բան եր: Մալարիայի ձեռքից տառապող գյուղն ամենից շուտ և ամենից շատ թափվեց բժշկի զլիսին: Գալիս եյին ու գալիս: Հիվանդանոցի վրա եյին թափվում, ինչպես վոչխարը-աղի: Բժիշկը վորոշեց հետաղոտել ըրջանը: Մոգական լապտերը վերցրած ըրջադայում եր, դասախոսություններ կարդում, բացատրում: Մի տեղ թոքախտի ավերածությունների մասին եր խոսում, մի այլ տեղ՝ տիֆի, իսկ մեզ ծանոթ գյուղերում՝ նաև յերկար կանգ առավ մալարիայի վրա:

Մութն ե: Կալի սրահի կալապանի տակ, մոգական լապտերն իրար յետեից ցույց ե տալիս մեծացրած մոծակները: Վողջ գյուղը կալն և թափվել: Նայում են մոծակներին, բացականչություններով ծածկում բժշկի գրուցը:

— Հլա-հլա', են անտերի քթին մտիկ, քթի՞ն...

— Բա հլա վոտներին, վո՞նց ա չարդախ արել...

— Ընկե'ր բժիշկ, դրանցից ինչքան ուզես՝ մեր ճշլկութը միքն ա...

— Եսոր ծառի տակին, հենց ենա աչքս կպչելու վրա յեր, վոր մինը յեկալ ու քթիս ծերին վեր եկավ. անտերը հենց կծեց, վոր հրես տեղն ուռել ա, կարմրել...

— Հենց այդ կարմրածի մեջ և մալարիայի թույնը, բացատրում ե բժիշկը :

Յանի դա յել ոճի պես յաղու (թույն) ունի՞...

Բա, բա՛... յերեվակայիր՝ ընկեր, վոր ոճի թույնից ազատվելն ավելի հեշտ ե, քան մոծակի...

Գյուղացիք, վոր առանց այն ել կասկածով ու թերահավատությամբ եյին վերաբերվում բժշկի զրուցին, այս ել վոր լսեցին, ել չհամբերեցին: Քրքիջ բարձրացավ, ծաղր ու ծանակի ծայրը բացվեց:

— Վայե՛... Զրես մի ոճ պտեմ զցիլ եղ դոխտուրի ջանին, տենամ վրոնց ա ազատվում ձեռիցը:

— Ես ինչ դա զրիցն սկսել ա, ել պակասը-պակասը մի ոտխնություն մլակ կծած կլի ինձ, բա խի՞ չեմ մեռնում...

— Էհը՛, հրես մինն ել ծմբալով վեր եկավ թուշիս:

— Դոխտուրի մաշինի ծակիցը չլի՞ յեկած...

— Արա, մի քիչ խոտ կրակեցէք, ծուխն եղ անտերներին թակի, կորչեն եղ մարդակեր հարամիները...

— Ե՛... զրից ա, ասում ա, ե՛լի... հենց ա դուրս բերում, կասես մլակն ոխտը գլխանի վիշապ ա...

— Կարում չեն թե բժշկեն, մահանեն մլակներ են բոնում:

Ղժվժոցն ընկել ե: Գյուղխորհրդի նախագահը, վոր ժողովը կառավարում ե, նա յել ե հաղիվ իր ծիծաղը զսպում: Բոնանում ե իր կամքի վրա, զոռով լուրջ դեմք ընդունում, վոր չփոթիկա:

— Տա՛զ արեք, ես մարդն իր զրիցը վերջացնի, սաստում ե նա, մի փայտով խփում սյունին: Վոչ զանդ կա, վոչ սեղան:

— Բո՛լ ա, բո՛լ ա, եղուց թուր ու թվանք կառնենք, մլակի վորս կզնանք, կկովենք, վոնց վոր դոխտուրն ահրամայում:

— Տեսնաս ես գիտնականնին խի՞ յեն եսքան շաշըլում...

— Մարդ իմանամլա՞կն ինչ ա, թե իրան մարդ ըսպանելն ինչ ըլլի. մլակն ել մարդ կոպանի... ասում ա, ելլի...

— Իռնեմ մի հազար հատ սաղսաղ կուլ տամ, տեհած հլա ինձ մի բան ելա պատահում ա... .

— Զասե՞ս թա վարժապետին ել մեր գեղի մլակնին խորի տվին:

— Տը՛զզ... դե՛նը փախի, մլակի պուլեմյուտն է կավ...

— Տղե՞ք, խաբարը ճկուտն ա հասել, ինչ վոր մլակ, հրեն թուր ու թվանք վեր կալած դալիս են, փախեք, գլուխներս ազատենք, թե չե սաղ գեղը սրբելու յեն...



Բժշկի զրույց-զեկուցումը ծամոն դառավ ընկավ գյուղի բերանը: Մամեցին, ծամծմեցին, ծաղրեցին, բայց և այնպես դիտության «թույնը» տեսել եր իր գործը, վարակել եր:

Գյուղացին մինչև չփորձի, չշոշափի, եր կաշվի վրա արդյունքը չըզգա, չի հավատալ, թեկուզ գլուխն ամեն որ դիտության խոսքով լվանաս:

Գյուղը կպել ե մոտակա սարի լանջին թառած, կամ բարձրաբերձ լեռան գլխին պառավի նման կկզած ավերակ վանքին ու մղած մատուռին: Հիվանդին տանում են ուխտ, պահում մի շաբաթ: Մաքուր լեռնային ողից ու հովասուն անտառի զեփյուռից հիվանդն ուշքի յեղալիս. սառն աղբյուրի ջուրը և լավ սնուռնդը ժամանակավորապես խեղդում են մալարիայի թույնը. հիվանդը վոտի յե կանգնում, թշերը վարդաջրով ներկ-

վում են, ծնկները պնդանում: Առողջ ե: «Վանքը բժշկեց», «մատուռն ազատեց»—այսպես ե համոզվում գյուղացին, վորի հավատն ել ավելի յե ամրացնում ու մեխում վանքի սպասավորը ծեր, վոր չդիտե ինչ բան է մալարիան-«վանքի չնորհիվ»:

Եկամուգ բացված գարունը սգի ամառ ե դառնում գյուղի գլխին: Դեղը չի ոգնում, իսկ ճկուտը չի ցամաքում:

Եեկավ գյուղատնտեսը. նա նույն բանն ասաց, ինչ վոր բժիշկը: Բայց սա մի նոր բան ել արալ. մանր-մունը ճահճների վրա նավթ լցնել տվեց:

«Ավատը, ենքան նոթը ջուրն ածեց զուր տեղը», — ասացին գյուղացիք: Նորից ծայր տվին խոսակցությունները:

Ասում են Բադվի նոթը, են վոր տրուբեքով տանում են Բաթում, բերելու յեն, վոր ճկուտը նոթի ամբար շինեն, բալքի մլակը վերջանա:

— Ցենաս են սարի ծերին վոր ճկուտ չկա, բա են տեղի մլակն վորդիան ա: Թե՞ են մլակը կծում չի:

— Կծում ա, համա... հրե՞ն, բժիշկն ասում ա, թե են մլակը թունավոր չի, նրա կծածից մարդ չի հիվանդանում:

— Հալրաթ դրանց մեջ ել ցեղեր կան, ելի, վոնց վոր հրես մեր գեղումը Զոփուռանց ցեղը մուռտառ ցեղա, Քոսականց ցեղը-պող, Պառավանց ցեղը-մարդապան...

— Ո՞վ կիմանա հողի ու ջրի բանը... զրից ա, ասում են, ելի...

— Զրիցը-զրից ա, համա հրեն եսոր չորս հոդի թաղեցինք, մի եղքան ել եգուց, ելոր... սրա վերջը...

— Մնկողը՝ կմեռնի յել, ով վոր են աշխարհն ուստի
ու մինչև դատաստանի որն ապրի, թող նա պարծենա:
— Ախըր մեռնես, մեռնելու պե՞ս, թէ՝ անտեղի
շան սատակ ըլլես:

— Շանսատակ չե՛, մլակասատակ ասա:

— Հա՛, հենց մլակասատակ ասեմ. եղ ժարդեկը
չալբաթ մի բան զիտեն, վոր եղքան պնդում են, թէ
չե՛.. եղ վո՞նց ա, ուրիշ բաներում խելոք են, հենց ես
մի բանումը շա՞-ա՞շ...

— Գնա՛, գնա՛, գնա հրեն յաչեյկի տղեքը կոլեկ-
տիր են դառնում, վոր ճլկուտը ցամաքացնեն, նրանք
ել են քեղ նման խոսում, գնա, բալքի դու յել նրանց
հետ մեկտեղ բաթմիշ ըլեք ճլկուտի միջին, ձեղանից
աղատվենք:

— Ճլկուտը կցամաքացնենք, բա՞ս... բա ել ի՞նչ
բանի կենան. ցամաքացնեն, վոր ամառվա հուր-ալավին,
թէ շոդած գոմեցը մեջն եր մտնում ջանը հովացնում,
ե՛դ ել կտրի:

— Մլակը կոտորելու տեղ, գոմեշ են կոտորելու:

— Բա իմ գոմեշը խուրձը կրելու վախտը, վոր չո-
պիցը թխած լեզուն հանի ու հեա, յես վո՞նց եմ նրան
հովություն տալու, բա ճլկուտը վոր ցամաքացնեն,
գոմեշս վո՞րտեղ պտի լող տալ... թէ՝ սելի տակին սիր-
ուը ճաքի, տունս քանդվի...

— Հրե՛ն գետը...

— Դրանք գե՛տն ել կցամաքացնեն, գե՛տը...

— Զե՞, չե՛, ասում ա, արտդ ջրելիս հենց արա,
վոր մի պուտ ջուր ել ա գնա վոչ դրա ճլկուտը:
Դե գնա ջրի բերանին սանձ դի, թոկով կապի, վոր
ճլկուտը չթափվի:

— Զե՞, գնա թժշկին կանչի, վոր գա մի գանախու
ել ջրի գլմին կարդա ու հասկացնի, վոր մլակին ջուր
չտա:

— Հրետ, հրե՛տ, մի քեզ ել մտիկ, չանեդ կարում
չես թե կառավարես, գողը ջանդ ա մտել, ատամնիդ
չխէխսկացնում ես թե եգուց վոտներդ մեկնես, գոմշի
գարդն ես քաշո՞ւմ...

— Հալբաթ վոր գոմշիս դարդը... Յես վոր մեռ-
նեմ, յե՞ս կմեռնեմ մենակ, համա գոմեշս վոր սատկի,
սաղ տունս կքանդվի...

Խոսակցությունը սրվում ե: Ճլկուտը թողած բըր-
նում են կոմքջիջի ոճիքը, քաշում-քաշքըում, ամեն բան
խառնում իրար, իսկ ամենից շատ հայշոյում են կո-
լեկտիվը, վորի ինչ լինելը չգիտեն, բայց քանի վոր
նախաձեռնողը կոմքջիջն ե, վորոշել են, վոր վատ բան
ե լինելու:

Սա-իհարկե գյուղի մի կողմն ե, մի մասը, և այն
ել զգալի, մեծ մասը, վորովհետև գյուղն ունեվոր ե:
Ինչքան գետնի յերեսին ե յերեսում, մի տասն այնքան
գետնի տակ ե թաղված:

Լսել են, թէ կոլեկտիվ մտնողն ամեն բան մեջ տեղ
ե դնելու, վախենում են պահածները յերեան գան: Ա-
մեն մեկը՝ իր տան մյուս անդամներից ծածուկ բան ե
պահել, նրանցից գողացել, վախենում ե հոգապահու-
ուը հանեն: Ավելի լավ ե հոգին հանեն: Ճլկուտը մահա-
նա յե: Ճլկուտն իրենց ներան ե: Յեվ այդ ճլկուտի ցա-
մաքելուց են վախենում:

«Արջն իրեն ահից կգոռա», ասում ե ժողովրդական
առածը: Յեվ գոռում են ձայնը գլուխը գցած, յեռ կո-
լեկտիվ չտեսած, չիմացած...

Կոլեկտիվը նոր ե կազմվել:

15 անդամ ունի կոլեկտիվը, ութը կռմբջիջի անդամ են, մնացածը-չքավոր և բատրակ: Առայժմ վարելահողն ե միատեղ. այդինքը ցրված են, միայնելը հնարավոր չե. անսառնների թիվը քիչ ե, բայց և այնպես կաթնարտել են կազմել: Դյուղացիք խեթումեն, ծաղրում: Կոմյերիտականները դեռ տատանվում են. կապված են իրենց հոր տնտեսությանը, բաժանվել չեն կարող: Ագիտացիան սղցել ե միջակների միտքը: Նրանք դեռևս դիտողի դերումն են, թեև վոչ անտարբեր: Առաջին տարին ե, առաջին քայլը: Մի կողմից վոռեվորություն ե, մյուս կողմից պրովակացիա:

Ճկուտը ցամաքեցնելու հարցն ե դրված:

Կառավարությունը վորոշ նպաստ ու յերկարատև վարկ ե բաց թողել կոլեկտիվին, վոր ճկուտը ցամաքեցնի, տեղը բանջարանոց գցի:

Համայնքի ընդհանուր ժողովն ե: Զայնազուրկներին չեն թողնում մասնակցեն, գիտեն, վոր թարս են խոսելու: Կոլեկտիվի նախադահը հայտնում ե, աղետության աջակցության մասին, խնդրում ե, վոր գյուղացիք միացյալ ուժերով մասնակցեն աշխատանքին, ճըլկուտը ցամաքեցնելուն: Տղամարդիկ դեմ են, բայց չեն կարողանում պատճառաբանեն, թե ինչու. միակ առարկությունն այն ե, թե իրենք չեն ուզում աշխատեն, ցամաքեցնեն ճկուտը, իսկ տեղը մնա կոլեկտիվին:

Կանայք ընդհակառակը. թեև նոր բացված լեզվով, անկապ խոսքերով, բայց սրտի բուռն կակիծով են խռովում. կողմնակից են, և վոչ միայն կողմնակից, այլ՝

պատրաստ են իսկույն գործի դիմելու: Խմացել են, վոր ճկուտի ցամաքեցնելուց և կախված յերեխաների առողջությունն ու կյանքը:

— Ցղամարդն ի՞նչ գիտե, թե կնիկն ինչ ցավով աերեխա բերում, ի՞նչ տանջանքով ապահում, մեծացնում, խոսում ե կին կազմակերպչուհին, մե՛զ հարցրեք: Հերը վոր կա, վորդու համար յաղ (ոտար) ա, համար յերեխեն մեր մեջքիցն ապոկլում. Թող մեր երեխեցն աղատվեն կոտորվելուց, մենք, ա՛յ, ես դեղուան ինչքան կնիկարմատ կա, մենք կցամաքացնենք ճկուտը... Ով վոր ել հակառակ ա, նրա տուն ու տեղն ել կցամաքացնենք...

— Ցարին մի երեխա յեմ բերում, աչքիս միսի պես պահում, մեծացնում ու հիմի մենակ հինգ ուն հողաթմբի տեր եմ, թե ճկուտն ա անում, գնում եմ ես ձեռներովս քանդեմ, արցունքն աչքերին խոսում ե մեկ ու բիւը:

Յեկ այսպես անվերջ: Ժողովը դարձել ե կանանց ժողով: Մեկը՝ մյուսից թե առած, իր ցավն ե պատմում: Ամուսինները վոյնիչ ասել չեն կարողանում: Առառաջվա ժամանակը չե, վոր սաստեն, տուն գցեն դուռն երեսին փակեն, կամ ջարդուփշուր անեն, վորներն ու միսը մեկ անեն:

Հիմի համոզված եք, ե՛լի, վոր ես գեղի տունը քանդոյն եղ ճկուտն ա՛... ։ Ծոր ե տալիս դալլար Պետին, վորը և՛ սափրիչ ե, և՛ հեքիմ, արյուն կտրող:

Համոզվածներ քիչ կան, բայց ուզում են ե՛ղ՝ ել փորձեն:

— Հա՛... աշխարհիս ամեն բան փորձի վրա յա, կողամանն ինչ լողաման եր, նա յել եր հազար անգամ

փորձում, մի ցավին հազար հանգի դեղ տալի, փորձեցք, մի բան վոր գյուղը փող չի ծախսում, -կրկին խոսում ե դաշլաք Պետին ու չի բուիի արծաթապատ դըլուխը պտղուցում պինդ հուատված, մեխով քչիորում, միջի կիսայրված թամբաքուն, ու բոռումը թափալով՝ դուրս գնում:

— Եղ յաչեյկեն հենց ա անելու, վոր մարդ ու կնիկ իրարից բաժանվեն. կնանոցը դրավել ա, խելքից հանել, — մըրթմրթում են զրադ քաշլած մի քանի հոգի:

— Ով վոր ճկուտի ցամաքեցնելուն մասնակցի, ցանած բանջարեղենից բաժին կառնի հավասար, — հայտարարում ե նախագահը:

— Մեղ վոչ մի բան ել պետք չի, մենակ թե հիվանդութինը վերանա, — խոսում ե մի կին, վորին ձայնակցում են և յուսները:

— Ա՛ խալի, — գոռում ե արադ քաշող Հարեթը, — գեղի տունը քանդողը ճկուտը չի. մեր երեխեքը կոտորվում են վորովհետեւ աղբրի ջուր չունենք. գետի ու առվի պղտոր ջուրն ա հիվանդացնում. մեծերն արադ խմելով խեղդում են ցավին, համա երեխանց համար դժար ա, նրանք արադ չեն խմում, յեկեք ետ ինչ վոր փող ա տալի կառավարութինը, եղ փողով աղբյուր անց կացնենք սարիցը. ճկուտի հետ ի՞նչ դավի ունեք ...

Աղբյուր բերելու հարցը հին ե. շատ վաղուց՝ քանի՞ — քանի անգամ ծեծվել ե այդ չարաբաստիկ հարցը. փող են հավաքել, կալե խողովակներ պատվիրել, բայց ... աղբյուրի փողը ջուր ե դառել, սրա-նրա կոկորդով հոսել. այլև վոչ վոք չի հավատում, թե բան դուրս կդա. գյուղացիք կասկածում են: Սովորաբար փողը հավաքում, պահ ելին տալիս ամենից հարուստին, վոր

չկորչի. նա յել ուսում եր, իսկ գյուղացիք չեյին կարողանում բողոքեն նրա դեմ, վորովհետեւ դիվանն ու դատաստանը նրա կողմն եր, ուժը նրա ձեռի:

Արադ քաշողի հայտարարությունը հուզեց ամենքին: Գոռում-դոչումն ընկալ:

— Աղբյուր բերեք, աղբյուր ...

Ճկուտն ու աղբյուրը խառնվեցին իրար: Նոր հարցըն այնպիսի վարպետությամբ եր դրված, այնպիս տրամաբանորեն եր պատճառաբանված, վոր ժողովականները սառը ջրով տարված՝ ճկուտն ել մոռացան, մալարիան ել: Համարյա գլուխ յեկած գործը, նորից խանդարվեց, գլխին սառը ջուր մաղվեց: Դե՛, յեկ ու նորից տրամադրություն ստեղծիր, թեկուզ կանանց մեջ, վոր ճկուտը ցամաքեցնելու աշխատանքներին մասնակցեն:

Սառն աղբրի ջուր ունենալն ե լա՞վ, թե ճկուտը բանջարանոցը: Ի հարկե սառը ջուրը: Գյուղը բանջարեղենի կարիք չունի:

— Ճկուտն ել ցամաքեցնենք, աղբյուրն ել բերենք, — հայտարարում ե նախադահը:

— Ուժներս չի պատիլ:

— Ծանր բեռ ա:

— Կոլեկտիրը թե դոչադ ա, թող անի:

— Յեկեք ինչ վոր չքավոր ու միջակ կա, կոլեկտիր մտեք, ուժ տվեք ես գործիք, միասին անենք:

— Զե՞ ... դուք հալա մի ողուտավոր ուն արեց գեղի համար, վոր տեսանք լավ ա, մենք ել կդանք, մենք ու լավ բանից փախչողը չե՞նք ...

— Դե՛, գնանք, գնանք, միանում միանում ա, հազար ու մի ցավ ունենք ...

— Հա՛, հա՛, լավ եմ անում շատ խոսե՛ուց գլխները



ուռավ, ճկուտն ել ջւանդամի ծոցը, աղբյուրն ել ...
Թոթթորալով ցրվեցին :

Ժողովատեղում քոռ-իոշման մնացել են կոլեկտի-
վի անդամները և մի քանի համակրողներ :

— Բա հիմի ասում եք կուլակների սրտովն ըլենք,
Ե՛մ, — Վշտացած ձայնով ասում ե նախագահը :

— Բա վո՞նց անենք, — տարակուսում են մյուսները :
— Ա՛յ, թե վո՞նց անենք, — դրի՛, ինչ վոր կառեմ, —
Կարդաբում ե նախագահը :

Քարտուղարը թուղթն ուղղում է, գրեշը թաթ-
խում թանաքի մեջ : Լենինի նկարը պատից կախ ժըպ-
տում է :

— Լանջիթի բաժնում գրի .— Ուրեմք՝ կոմքիցի, կոս-
տոմովի բջիջի և միաժամանակ կոլեկտիվի անդամների
խառը ժողովը լսեց զեկուցում ճկուտը ցամաքեցնելու
մասին : Պրծա՛մ՞ր . . . Ըստե՞նց : Վերջակետը դի : Հիմի
վորաշեցին-ի բաժնում գրի .— Կառավարության հատ-
կացրած փողը հատկացնել աղբյուր բերելու գործին,
իսկ ճկուտը ցամաքեցնելու համար եկուց առավոտ բո-
լորս միասին բահ ու թի վեր կալած դնանք ու ճկու-
տի դյուլ պատռենք, արխեր անցկացնե՞նք, վոր ջուրը
քաշվի, ցամաքեցնենք : Յեվլս, հետեվենք, վոր բաղե-
րի ու արտերի արխիցը ջուրը չթափվի ճկուտի մեջ :
Յեվլս հետեվենք, վոր բաղերի արանքներում նոր ճըլ-
կուտ չդոյանա, յեղած մանր-մունըն ել ցամաքեցնեն,
բալքի գեղն ազատվի հիվանդությունից : Յեվլս, վո-
րոշումը միաձայն ա, ով հակառակ ա, թող կոլեկտի-
վից հեռանա, բջիջիցն ել : Գրեցի՞ր, ըստե՞նց, վերջա-
կետը դի : Իմացա՞ք, դե հիմի դնացեք, քնեցեք, վոր ա-
ռավոտը վաղ գործի կենանք . հերիք եր ինչքան դիլի
դիմին ավետարան կարդացինք . . . Արա Մո՛ւիի, դու

ովահապան կըլես, քու ոռնիկի հարցը հետո կրննենք,
իսկ ով վոր ջուրը կթողնի, վոր ճկուտը դառնա, կամ
ով վոր նոր ճկուտի պատճառ կդառնա, ցուցակ կա-
նես, կներկայացնես դյուղխորհուրդ, վոր տուգանք
առնենք ու գցենք աղբբի փողի վրա : Թող հենց եղ կու-
լակ չները բլրզան ու խանդարեն, տենանք ո՞ւմ մերը
տղա կըերի . . .

— Մանր մուրճի հարվածների նման իջնող նախագահի
խոսքերի դեմ ո՞վ կարող ե արարկի : Կուսակցական
դիսցիլինա յե, հանաք չե :

Աքորականչ ն :

Ճկուտը մտքում փորելով՝ դյուլի խավար բա-
վիղներով կես քուն կես արթուր շտապում են իրենց
տները կոլեկտիվի անդամները :

— Աղջի Մագթաղ, հենց արա եդուց կինբաժինն
ել մեղ միանա, կնանիք շատ հավաքվեցեք, — ասում ե
նախագահը, բայց փոխանակ դեպի իր տունը ծովելու,
ձամբեն շարունակում ե :

— Ետ ո՞ւր, — հարցնում ե Մագթաղը՝ կին կազմա-
կերպչուհին :

— Գնամ զուռնաչի թևանին իմաց անեմ, վոր լի-
սածեգին դա . ես բանն առանց զուռնա դհոլի դլուխ չի
դալ, լազաթ չի ունենալ . . .

Ճեռու հորիզոնում կարծես մի ինչ վոր անհայտ
ձեռք բաց վարդաջուր ցրցամ տվեց ճերմակ՝ ամպերի
նիրհած յերեսին : Լայնարձակ հարթավայրը նմանում
եր մառախլապատ ծովի : Մլվլաց առաջին թռչունը, փոք-
րիկ թեվերը թափահարեց, կտուցը կոխեց քրտնած
թեր տակը, քորեց ու թռավ վորսի : Գոմում կապած
անասունները բառաչեցին . զուր խմել են ուզում : Մը-
շուշի մեջ ինչ-վոր ստվեր շարժվեց : Կուժն ուսած մի

կին վաղում ե, վոր քանի առուն պարզ ե, ջուր բերի ։
Հավերը կոկուարով քուշուջ են անում փեյիններում։
Դյուղը դեռ քնած ե :

Մեկ ել կոլեկտիվի նախագահի տան առջեի կալում
զուռնաչի հեանի զուռնան աքլորածուտի պես անկանոն
ծվծվաց ու զից «սահարի»-ն։ Սեփոյի թմբուկը դղըր-
դաց :

Ի՞նչ հարսանիք ե, անսպասելի, վորից վոչ վոք
տեղեկություն չունի։ Վեր են թռչում տեղներից, ա-
ռանց հազնվելու, գլուխները հանում ծերպ արած
չոնից, ականջները սրում, վոր ստուգեն, թե ձայնը
վոր կողմից ե գալիս։ Եերեխանները բորբիկ ու կիսա-
մերկ վաղում են սրթսրթալով ու ճպոստ աչքերը տը-
րորելով։ Դժվարցն ընկել ե նախագահի կալը։ Գալիս են
ու դալիս։ Կոլեկտիվի անդամները զինված են բահով,
թիով, դաշմայով, ցաքատով . . .

Կիրակի յե լուսանում։ Դյուղի ծայրին, քարափին
կպած մի գորշ ու խարխուլ, պատերը ծիծեռնակի ծրտով
ծեփված, վրան փոքրիկ, քառակուսի լիսածակով տուն
կա, գոմի նման յերկար ճգլած, վրան Ռոբինզոնի հո-
վանոց պաղած։ Տան ցածլիկ դուռը բացվում ե. ներս ե
մտնում մի սկ, խանձված կոճղի նման մի մարդ։ Քիչ
հետո հովանոցի տակից կախված թոկը շարժվում ե.
լսվում ե ինչ վոր ժնդոց։ Լարծես մեկը փայտե գդալով
խփում ե իոքրիկ պղնձին։ Յեկեղեցու զանդն ե, վոր
վաղուց ճաքել ե. այժմ նա ժնդժնդում ե և խանդարում
ե զմբեթի ճաղերից կախված չղջիկների քունը։

«Հավատը մեռել ե դյուղում», պինթինթում ե սե-
վավորը և մոմ վառում, ապա ճպոստ աչքերը շուտո-
շուտ դարձնելով դեպի դուռը, սոված զամբոի նման
խոխոցնելով սկսում «տեր յեթե զըթունս իմ բա-

նաս» հաղար-հազար անգամ կրկնված աղոթքը։ Վոչ
վոք ներս չի մտնում։

Նախագահի կալում պարի յեղանակ ե փչում զուռ-
նաչին. յերեխանները թռչկոտում են. մեծերից մի քանի
հոգի ձեռներն իրար ուսի դրած շրջան են կազմել.
պարի շլթան որորվում ե սկզբում հանդարտ, ապա
ավելի հորդոր։ Հայտնի «զոփի»-ն ընկել ե յերակները,
ժարդնի ամեն մի հաղ(հանգույց)կոտրատվում ե. թելիկ-
մելիկ են դալիս. տղամարդիկ հետզհետե ավելանում
են. կալի լայնքով մին, ծայրով, շրորում են։ Պարը—
տղամարդկանց պար ե, կանայք հեռվից, կտուրներն
յելած թամաշա յեն անում։ Հարցնող չկա, թե ինչ խա-
րար ե. պար ե, պարում են։ Պար-բաշին (պարի ղեկա-
վարը) կարմիր թաշկինակը Փոփոացնում ե առավոտ-
յան զեփյուռի նման, յերեմն նշան տալով զուռնաչուն,
վոր արագացնի։ Զուռնաչին վոգեվորված, թշերը շուտ
շուտ ուռցնելով զիլ փչում ե, ինքն ել որորվելով ու
զուռնի ծայրը վեր ցցելով։ Արևի առաջին շողերը մի-
զում են պարվորների գլուխը։ Տղերը տաքացել են։
Պար բաշին նշան ե տալիս. սկսվում ե «չամբար-չամ-
բարի»-ն։ Յերկու հոգի մտան շրջանի միջի բաց հրա-
պարակը։ Պար բաշու ձեռին մի ճիպոտ կա։ Խսկական
թամաշան նոր ե սկսվում։ Պարողներից մեկն ինչ վոր
անի, մյուսն առանց ուշանալու պետք ե կրկնի նոր յնը,
ուշանալու դեպքում, ճիպոտի հարլա։ ինչնելու յե
թիկունքին։ Փափախներն ընկան, գուրհներն են արձա-
կում, միմյանց խարում են, մեկը ձեռք ե տալիս ար-
խալուղին կամ տրնիխն. դիմացինը հենց գիտե, թե
հանում ե, սկսում ե արձակել, բայց ճիպոտը հարլա-
ծում ե։ Զգո՞ւշ...

Քափ-քրտինքի մեջ մտած՝ պտտվում են ջահել-

ները բոլորովին մերկ, մի միայն շալվարով. ռարում
վոր լինին, են ել են հանելու, բայց եստեղ գեղամեջ
ե. կնիկարմատ կա: Զուռնան կոխի յեղանակ ե փչում:
իրար հասան, բռնեցին մկանները պրկվել են. հոռ-հոռ
են անում իրար: Ո՞վ կհաղթի . . .

Գյուղիսորհողի նախագահը մեջ ընկավ, բաժա-
նեց:

— Դե՛, հիմի ով դոչաղ ա, թող կոխը շարունակի
ճկուտի միջին, ա՛յ, տղա կասեմ, թե չխրվեք,—ա-
սաց նա ու աչքով արավ, վոր զուռնան ձանապարհի:

Յերթի, կամ ինչպես ասում են, «ձիավորի» յե-
ղանակը հնչեց, հետն ել մի բարձրածայն, միահա-
մուռ ուռա՛... Արևի տակ փայլում են բահերը, թիե-
րը, զանազան գործիքներ:

— Ով վոր իր նամուսը ծախել ա, ու թո՛ղ տանը
մնա, հավերին կուտ տա, —բարձր գոչում ե կողեկ-
տիվի նախագահը:

— Ե՛ս ել մի նամուս չի, արի գնանք,—ասում ե
ճկուտը ցամաքեցնելուն դեմ խոսողներից մեկը և
միանում շքերթին:

Մի քանի հոգի գլուխներն որորում են, բայց քիչ
անց՝ նըանք ել են ձանապարհվում:

Կանայք տուն ու տեղ շտապ հալվաքեցին, հաց և
ուտելեղին վերցրին, վազում են իրար ուսի տալով և
սրան-նըան կանչելով:

Գյուղում մարդ չի մնացել համարյա: /
Յեկեղեցու դռան մոտ, քարի վրա նստած, թե-
վերը կոտրած աղուավի նման մի առ բիծ կա: Շարժ-
վեց: Բոնոթի յե քաշում:

«Ել վոչ ժամ մնաց, վոչ պատարագ. պատկից ու
կնունքից ձեռ ա քաշել խալիս, մեռել թաղելն ել վոր

չըլի՛ . . . ե՛հ աշխարհ, աշխա՛րհ . . . Ել վոչ կիրակի
կա, վոչ պաս, վոչ մատաղ» . . . հառաչանքով մտաբե-
րում ե անցած որերը, բայցուշի պես կոկում:

— Հեռվից քանդեցեք, գեսիցը, չորս տեղից ար-
խը հանեցեք, վոր գյուին համենք թե չե, փորը
պատուենք, ջուրը ըեպի գետը գնա, —կարդաղըում ե
նախագահը:

— Դե՛նը կաց, կիրակես, ճկուտը գերեզման
կրառնա քեզ համար . . .

— Գորտերը բողոք են տալու, վոր իրանց բաղ-
նիսը քանդում ենք:

— Դե՛, ձեզ տեսնեմ, տղերք ջան, արխը լեն ու
խորը քանդեցեք:

— Թե՛ան, զուռնեղ պինդ փչի: Յեկեք մարդ
դարկենք տեր Անկարումի յետեվից, թող գա մլակնե-
րին պատկի:

— Հա՛, հա՛, լալ ա ասում, ես գորտերն ել տի-
րացութին կանեն:

— Մեսրոպ, մի աչք ածա, տես ով չի յեկել,
միտդ պահի, վոր ցուցակ անենք, պետք կդա:

— Դե՛, հա, դե՛, տղամարդիկը թող քանդեն,
կնանիքը հողը դուս տան:

— Հենց արեք, ապրեք, արել կես որին վոր գա
թե ջուր խմի ճկուտի գյուլում, մենակ ցեխ ու տիլ
դանի:

— Թող գնա ծովիցն ու գետիցը ջուր խմի:

— Ղազմես վորտեղին տալիս եմ, ջուր ա գում
գցում:

— Տրեխներդ հանեցեք, շալվարի փոխկերը յետ
ծալ տվեք:

— Դամշկուտում ոճ կըլի, երեխանցը հեռու պա-
հեցեք:

— Բա հենց ասում եք—կուլակ եմ, յես ել ձեղ
նման հրես ես ցեխումը տրորվում ե՞մ, թե չե...

— Դու կուլակ չես, խելքդ ու միտքդ ա կուլակ:

— Մլակի ձենը գեղիցը կտրվի թե չե, քեզ ձայն
ենք տալու, քլունդդ պինդ վրա բեր:

— Յանի մի ասեք, տենամ, թե իմ ձենը իմ՝ յեր
կտրել ե՛, յես ել ձեղ նման ուհամբ ե՞մ, թե չե'...

— Թարս զրիցես անում նրա համար, դուզ իսո-
սա, ձենդ քեզ տանք:

— Ձենդ հրես բոռումս պինդ հուպ տված, վոնց
վոր դու եյիր ինձ քու բոռումը պինդ հուպ տվել
նոքյար վախտս:

— Արա, իմ՝ չես բոռուդ բաց անում, եղ մարդու
ձենը յետ իր տեղը գնա, հիմի յել հո դրա բառո-
րակը չե՞ս:

— Ժամանակը թամամ չի. ձենն իրան տամ թե
չե՝ կարդին բանի պետք չի ածիլ վրես կրղավի...
հիմի յե՞լ բղավի...

— Են վա՞նց ա ասել... հա'.

«Հիմի յե՞լ լունը, յեղբայրք, հիմի յե՞»...

— Ե՞տ վորդիան հանեցիր, ետ մաշած յերդը:

— Թաղա յերդի միջին նիվիթ չկա:

— Հա՞-ա՞... արա կոմսոմոլ, մի ասա, թե են
վոնց ա ասո՞ւմ...

«Այս իին նկուտը կփորենք մենք,
մինչև իմֆերը—և ենտո,

Մեր նոր բաստանը կշիթենք մենք,
ուր վոչ մլակ կա, վոչ ել գորտ»...

Աժենքը ծիծաղում են այս նոր տեսակի ցինահր-
նացիոնալից վրա: Մի քանիսը յերգը շարունակում
են իսկական բառերով: Աշխատանքը յեռում է:

— Թեան, զուռնիդ ձենը կտրի, յետ դառեք հաց
կերեք, առավոտահացի վախտն անց ա կենում:

— Չե՛, չե՛, հազիր տաքացին ենք, եսա կհասնենք
դյոլին, նոր յետ կդառնանք:

— Տղերք ջան, հը՛ արեք պլծնենք, վոր ձաշից
հետո յել անելու բան չունենանք, ջուրն արխերովն
անենք ու թամաշա անենք:

— Դե՛, ձեղ տեսնեմ. «Հո՛ւպ տու, պոավի
տղա»...

Վոչ վոք յետ չի ուզում դառնալ աշխատանքից.
տաքացել են: Ամեն մի խումբ աչքի տակով ստու-
գում և մյուսին, վոր ինքը յետ չմնա. մրցակցու-
թյունը հասել ե իր գաղաթնակետին:

— Ստո՞... ո՞... ո՞պ, —բացականչեց չորրորդ
խմբի գլխավորը:

— Ի՞նչ ա պատահել:

— Զուրը վարարեց, ել առաջ գնալ չի կարելի:

— Յեկեք ես մեկեներին մեջք տվեք:

— Եետ դառեք, գնացեք հացի թաղարիք տեսեք,
եսա մենք ել ենք տեղ հասել, մեղ պետք չեք:

— Լավ են ասում. արա վա՛սիլ, վազ տու, գնա,
կոլեկտիվի հաշվին յերկու վոչխար, մի յերինջ բեր
մորթի, ես խալսը սոված հո չի՞ կենալու. մի գեղ
խալս ա, սրանց բերնին բան չի դիմանալ:

Վասիլը վազում ե:

— Արա, ե՛յ, ձենցը բեր, վոր բանի նման ըմի,
լզար ապրանք կրերես, կմորթեմ քեզ,

— Վասիլը գիդա իր բանը:

— Կնանունց մի ժամը թող յեւ դառնա ծառի
տակին սուփրա բաց անի, մի քանիսն ել թող ջուր բե-
րեն, եօս մենք պրծնում ենք:

— Վարթուշ ջան, մի քանի վոտից թեթև աղջիկ
վեր կալ, վազ տվեք մի քանի կուժ ջուր բերեք են
վերի աղբրիցը:

Աղջկերքը վազում են, թիթեռի պես յերկարա-
փել լեհիները փոփոացնելով: Մի քանի ջահել աչքի
տակով նայում են նրանց յետելից:

— Բանիդ կաց, խելքդ ջրի գնաց...

— Ես ձմեռ վոչ մի տղա իրավունք չունի Զագո
գնալու, վոր պսակվի, մինչև ամառվա հունձն ու
խոտը հալա չակաված վախոը, են բանի բոչ յամա-
նակը, չմասնակցէ վերի սառն աղբյուրը դէղամեջ
բերելուն:

— Իմացա՞ր, քարը վորդի դցե՞ց...

— Բա չիմացա՞ . մի որ ել վոր հավաքվենք եսոր-
վա պես, են աղբրի ջուրն ել կրերենք:

— Աղբյուրը գեղին, ես ասենք լավ, ամենքի հա-
մար, բա ճկուտի հողը...

— Ճկուտի հողն ել...

— Յավա՞ ... ա՞ ... ա՞ ... ա՞շ, ջուրը վարարեց ...

— Կա՞նգ առեք, տեղ ենք հասել:

— Յեկեք ճկուտի փորը պատունք:

— Զե՞ , թողեք ճաշից հետո:

— Տո, թո՞ղ մի բիզ տամ ես անտերի փորին ե՞ ,
ևնց ա միկիան Շամիրի ուրած փորն ըլի լկա-
լիս...

— Յեւ դառեք կրակ արեք, պղինձը վրեւ որեք,
հրեն Վասիլը վոչխարը մաշկում ա :

— Աղալո՞ , վազ տու քոմաղ արա, յերինջը մա-
սաղ արա ճկուտին:

— Վասիլ, ջիջյարը դժի կրակը «քյուլամա» ա-
րա, բեր նախագահին:

Արևը զենիթում կանգնած ժամում ե : Կանայք
բաց են արել սուփրան յերկար ու մեկ . ով ինչ բերել
ե իր տանից, մեծուեղ ե դրել:

— Տղե՞րք, —առաջարկում ե մեկը, —ասում եմ
վազ տալով գնանք գետը դառնանք, մի լավ լողա-
նանք, քրտինքներս մաքրվի ու յետ գանք նոր հալալ
հաց նստենք:

— Լավ ա ասում, —ձայնում են այս ու այն կող-
մից :

— Զմբսենք:

— Զենք մրսի, որը տաք ա :

Վաղում են :

Բաղերի յերամի պես թափվեցին գետը : Ճիչ,
աղմուկ, աղաղակ ...

Բոլոր հարսանիքների կրակուր յեփող հայտնի
«սուլյա կարապետը», վորը Նիկալայի ժամանակ մի
քանի տարի թյուրիմացարար գյուղական դատավոր
ե յեղել, և վորին դուրս են արել անպատիվ կերպով,
վորովհետեւ կաշառք ուտելիս և ապորինի դատ կտրե-
լիս շի յեղել, շերեփը ձեռին խառնում ե մեծ պղնձի
մեջ քլթքլթացող «չորան բողարթման» ու կերակրի
համը տեսնելով՝ դնդնացնում հայտնի բայաթին, վոր
ամեն անդամ ծանր ու բարակ յերգում ե կլկացնելով
և վորի իմաստը մոտավորապես այն ե , թե՝ «ավելի
լավ ե մարդ անալի կերակուր ուտի, քան անալի ըն-
կերոջ հետ յերկար ճամբար գնաւ»:

Ծոլսպատիկ նստուել են իրար դիմաց տղամար-

դիկ առանձին, կանայք առանձին։ Հին ագաթը դեռ չի վերացել գյուղում։ Տղամարդկանց հետ միասին սեղան նստելը դեռ ևս ամոթ և համարվում։

Գինի, ողի չկա, բայց ամենքի տրամադրությունն ել բարձր ե, կատակներ են անում։

— Էնկերնե՞ր, — խոսում ե գյուղանորհոցի նախապահը, — ճկուտի հարցը որակարգից դուրս յեկավ. եսոր մենք ահապին գործ կատարեցինք։ Եսա մեր ամբողջ գյուղի հասարակությունը մերով-մանուկով եռտեղ ա. ասում եմ մի վորոշում կայացնենք. . .

— Խ'եր ըլի, ա'սա:

— Ասում եմ, ես ճկուտի տեղը հատկացնենք մեր տպոցին, վորը շատ կարիքներ ունի, նոր բացված դպրոց ա, մեր յերեխանց միտքը լուսավորող, թող տարեկան ինչքան յեկամուտ վոր ստացվի ես հողիցը, գնա մեր ուսումնարանին։

Հետո. . .

— Կեցցե՛:

— Բու՛վո, բու՛վո. . .

— Ուու՞. . .

— Տո՛ւշ, տո՛ւշ։

Մափերի տարափ, գովասանական բացականչություններ։

«Շ-շ'-շ'-. . . խըլ-խըլ-խըլ-խըլ՛» . . .

Թվաց թե վարարած դետ ե դալիս։

Ճկուտին դեմ ընկած միջին արխերից մեկի բերանի հողե պատնեշը չղիմանալով փլչել եր ու ջուրն աղմուկով հոսում եր։

Վեր թուան տեղերից։

— Թեան, զուռնեդ ձիավորի փչի, ջուրը լահուալից։

— Արա վա՛զ տվեք են մեկելների բերանի հողն ելքաւ տվեք, թե չե ես մի արխի դրաղներովը կընկնի ջուրը, ամագներս կկըրչի։

Մի քանի հոգի թիերը ձեռին վազեցին։

— Արա բի՛զ տու, բի՛զ տու ու հեռու կաց։

— Փա՛խի, փա՛խի տակով չանի. . .

Հացն ել մոռացվեց, ճառն ել։

Ջուրը հորդեց. սկզբում պարզ, ապա հետզհետե պղտոր, լելախառը։ Արտասովոր տեսարանը մի ակընթարթ շշմեցրեց բոլորին, լսվում եր միմիայն վշվացող ջրի ձայնը, ապա միահամուռ աղաղակը միախառնվեց ջրի վշշոցին և մի խելադար ցատկուում ու սրար ոկավեց ճկուտի շուրջը։ Եեղեգներն սկսեցին որորել իրենց շոր գլուխները, գորտերը թռչկոտացին։ Հետզհետե բացվում ե ճկուտի տակը, տիղմ, վոսկորներ, թուզւների կմախքներ, նեխված գորտերի լեշեր, ժանդոտած դանակ, ո՞վ գիտի, վոր տավարածն ե կորցւել, հուլունքներ, կորիզներ, վեգեր, դատարկ լուցկու տոպի, կրիայի պատյաններ. . .

Ի՞նչ ասես չկա. . .

Զրի հոսանքը բարակեց. մի քանի հոգի ալիկի լայն են բաց անում առուների բերանը, վոր ճկուտում այլևս մի կաթիլ ջուր անդամ չմնա։ Եերեխանները համարձակություն ձեռք բերած՝ մտնում են ճկուտը փայլուն քարեր և զանազան իրեր հավաքում, բարերով խփում, հալածում են գորտերին ու ճահճային մժհղներին։

Ճկուտի շուրջը կատարյալ տոնակատարություն ե. . .

Իրիկնադեմ ե. . . Վողջ գյուղը մեծ շուքով ու հանդիսավորությամբ վերադառնում ե գյուղ. Ամեն մեկն շտապում ե տուն, խնամելու իր անասունին և հանգստա-

Նալու : Միայն կոլեկտիվի անդամները, նախագահի կարգադրությամբ հավաքվել են ժողովի :

Գիշեր ե . գարնանամուտի անսատղ գիշեր . յուսինն ս՞վ գիտի վորտեղ ե մոլորվել, ճամբեն կորցրել, չի յերևում : Ճրագները հանգան սովորականից վաղ :

— Կա-ա՞-, հարցնում ե կոլեկտիվի նախագահը :

— Կա' :

— Քանի՞ փութ :

— Տաս . տասերկու :

— Դե՛, ընկերներ ջան, առեք ես փողը, տվեք իրան, թող նեղութին քաշի, վեր կենա, կոռպերատիվը բաց անի ու մի հինգ փութ մեղ տա . ասեք կոլեկտիվն առ զում : Մարդու մի փթանոց բետոն վեր կալեք, լցրեք ու բերեք հետներդ : Հա՛, չմոռանաք, մի պաշկա յել սպիչկա վեր կալեք : Դե՛, մնացածդ ել գնացեք ինչքան հին փալաս-փուլուս գտնեք տանը բերեք, ամեն մեկդ ել մի կոնատակ խոտ :

Ցրվեցին :

Նախագահը ման-ման և տնում սենյակում : Գլուխը քորեց : Յերգ ե մոլում «Ամենայ մի բոյ պայդում, զա վլաս սավետա»... Աչքն ընկնում ե դիմացի պատին . լենինը ժպտում ե :

— Հը՛, ընկե՛ր լենին, ծիծաղում ես՝ ոսերենիս վրա... ա՞խ... ախր ինչի՞ շուտ մեռար ե՛, բա քեզ նման մարդը կմեռնի՞ ...

— Յեկանք : Ես ո՞ւմ հետ ես զրից անում :

— Ընկեր լենինի . յետ ոսերեն յերդ ասեցի, մին ել տենամ վրես ծիծաղում ա . ասում եմ, հիմի յել հայերեն յերդեմ, վոր վոչ հասկանա, վոչ ել թե ծիծաղի վրեա :

— Բան ասեցիր գու յել . հենց դիդաս լենինը հայեռ չի դիդում . . . Նա ամեն լիզու յել գիշա : Բա են

լո՞նչ ա, հրեն են հայերեն դրքերը, ևն լենինը չի դրթ՞ւ . . .
— Դե գնանք, գնանք գշերն անց ա կենում :

Ստվերները շարժվեցին դեպի ճկուտը : Հասան :
Յեղեգնուտը քամու հետ սվավում ե :

— Խոտը տեղ-տեղ վեր ածեք ճկուտի դրաղովը
մին, վրեն քիչ նավթ ածեցեք . ինչքան ել փալաս ունեք
ձեռներիդ, լավ նոթու արեք ու հազիր պահեցեք .
տեղ-տեղ ել հենց նոթը վեր ածեցեք դամշկուտի դալին
(խիտ) տեղը :

Շրջում են ճկուտի չորս բոլորը : Ամեն ինչ պատրաստ ե :

— Դե՛, հիմի խոտերը կրակեցեք, ետ փալասներն
ել վառեցեք ու դեսից-դենից շպրտեցեք դամշկուտի
մեջ, հրես հենց վառենք դամշկուտը, վոր տեղը ու մոխիր
մնա մենակ, տենամ ել մլակը վորտեղ ա վեր գալի,
կամ վորտեղ ա ձու դնում :

Հրդեհ : Յեղեգնուտը ճարդատում ե . բոցը յերկինք
և հասնում : Գյուլը լուսալորվել ե : Շները վախից կաղ-
կանձում են :

Զայներ, ձայներ, ձայներ . . .

Գյուլը թառժաժ եղավ :

Ճկուտն այրվում եր :



Աժառ ե :

Հանդերը լկվում են : Խոտը հնձել, գիզել են
գաշտում, վոր հետո տուն կրեն : Կոլեկտիվի արտե-
րը-շարքացան արած, գլուխները սանրած՝ կանգնած
են մարդաբոյ, որորվում են թեթև քամուց . հասկե-
րը գրկախառնվում են միմյանց, պար բռնում, գլը-
խով անում անցվորականին, բարեւում ու ժայռում,
ցույց տալով իրենց գեղին ու կարմիր ատամները :

Մանկակը—տեղուուել արտն և մօնէլ. հաճելի չը-
փոց ե շվզում, հետն ել միալար յերդի դնդնոց: Պայ-
ծառ ե հնձկորների դեմքը. գյուղում հիվանդների
թիվը շատ քիչ ե, մեռնող գրեթե չկա: Ճկուսից հո-
սած հիվա՞ն ջուրը տարավ իր հետ մալարիայի թույ-
նը, խառնեց գետին, իսկ սա յել սկց, կորցրեց:

Ճկուսի տեղը—մի մոխրագույն տափարակ ե գո-
գավոր. տիղմը—ճաքէլ-ճաքճքէլ ե: Յերեմն պոշա-
վոր կրիաներ են գալիս այցելության, կանգ տոնում
ապուշ կարած, չեն հասկանում, թե ինչու ցամաքնի
ե, ճկուտը: Շոդ ե. կրիաները լող տալ են ուզում,
վոր հովանեն այրվող մարմինը՝ պատյանի մեջ:
Ագոավները—յերամ-յերամ արշավում են դեպի ճը-
կուտը, պառուսներ գործում, անհուսավի կոկուում,
ապա կրկին հեռանում: Գորոտ չկա, ճկուտ չկա, մո-
ծակ ու մժիղ չկա...

Սարի ծայրից—արտերի, արոտների ու այցիների
պահապանի սրատես աչքը նկատեց ինչ—վոր մարդու,
մորը պարտիզում ջրում ե իր բանջարեղենը: Զայն և
տալիս —

— Եհե՞յ... ետ ով վոր ես, ա՞յ մարդ... մարդ
ես, թե երիխա, քե՞զ եմ ասում, ա' Բալաբեգենց բա-
ղի ոքմի, հենց արա ջրիդ բերանը տանուլ չոտս,
դրա ճկուտը ջուր չդնա. ըշտրափ ա, հա՞ մեծ
ըշտրափ...

Բալաբեղանք այն անկոտրում կուլակներն են,
վորոնք վոչ մի կերպ չեն համոզվում, վոր ճկուտն ե
յեղել մալարիայի բունը. նրանց վրա հսկողությունն
ավելի ուժող ե:

Բալամեդանց այգում գտնվող մարդը վնթիվն-
թում ե, թոնթորում, մրջուն կծած արջի նման,

բայց անզոր ե, չի կարող պահապանի նկատողությա-
նը պատասխանի, առավել ևս չի համարձակվի ա-
կանջի յետեւ գցի նրա ազդարությունը:

«Գյուղը հակառակվել ե մեղ,—առում ե Բալաբե-
ղանց ցեղի ավագը—կարմրալիք Արտեմը,—Բալաբե-
ղանք ես դեղի աչքի փուշն են դառել»...

Գյուղի ծայրին, չեկ փլամածքի տակ, տախտակով
ծածկված մի յերկար չարդախ կա նոր շինած: Այդ
ծածկի տակ Բրուտն ե նստած իր աշակերտներով:
Շիկահողը ցեխ են անում աշակերտները, տրորում,
ապա ձեռքով կազմում, ջոկում միջի քարերը, լավ
հունցում, սրածայր փափախների նման ցեխագունդ
շինում ու դնում վարպետի առաջ: Վարպետը—թելվե-
րը յետ ծալած, մետակ շապիկով, նստած ե հորի մեջ.
Վոտով պտույտ ե տալիս չարխը, ցեխագունդը դնում
կլոր տախտակին, զանազան ձեեր տալիս, առա
դուրս բերում խողովակ:

Ապադա աղբյուրի խողովակներն են շարված
ծածկոցի տակ, արեւում:

Զարդախի մոտ ծուխ ե բարձրանում: Հնոցն ե
անդադար վառվում: Վարպետին կարգադրված ե
հարվածային կարգով մինչև կալերի վերջը պատ-
րաստել, գուրս բերել անհրաժեշտ քանակությամբ
խողովակներ:

Աղբյուր բերելու նախաձեռնությունն իր վրա յե-
մերցիել կոլխոզը, բայց մենակ չե. վողջ գյուղն ե ա-
ջակցում: Զուրն ամենքին ե պետք: Զուրը—կուլակն
ել ե խմում, բատրակն ել, կոլխոզի անդամն ել ե խը-
մում, մասնավորն ել: Սակայն... Բալաբեղանք
թարսվել են:

Հին պարտքի հաշիվը մեջտեղ ե յեկել: Գյուղ-

իորենութպը հասաւէ վարժամ և կայացրել, վոր վաղ ժամանակ դյուզից հավաքած ու Կարմրավիլ Արտեմին պահ տված աղբյուրի փողը վճարի: Կարմրավիլ Արտեմը «բացարում ե», թե ինքն այդ փողը ժամանակին ծախսել ե գյուղի այլ կառիքների վրա: Զեն հավատում, լսել անդամ չեն ուզում: Բառակիներից մեկը ծաղրով ասել ե ժողովում. «Արտեմի կարմիր վիզը պետք ա կարմիր գյունդ (խողովակ) չիննը ու միջնը ջուր անց կացնենք, եղ վզի միջով շատ փողը են «Հոսել» դեպի նրա փորը»...

Կարմրավիլ Արտեմը հին գել ե, անաստոմ գել. նա շատ բան դիտե աշխարհի անց ու դարձից. լավա-աելլակ ե բոլցեկիների գործերին, նրանց արարքնե-րին: Փորձ ե անում բոլցեկիյան զենքով կռվել դյուլ-իորհրդի վորոշման դեմ: Խոսք ե թոցը բերանից իր նմաների մոտ թե՝

«Բոլցեկինին հին պարտքերի դեմ են, իրանք ին-չու չեն վճարում նիկալայի պարտքը, վոր փրան-ցուղն ու ինգիզը հաշտվեն, մենք ել ես նեղ որերը չքաշենք: Պարտքը տալը թե լավ ա, իրանք ինչո՞ւ չեն տալի, սաղ յերկիրը զավթել, նստել են»...

Եօ խոսքը—քամին տեղ ե հասցըլ: Գյուղացիք փսխացել են իրար ականջի, վրդովիել, հարցն ալե-լի կտրուկ դրել համայնքի ժողովում.—«Կարմրավիլ Արտեմը կամ հինդ հարյուր մանեթը թող տա, կամ թող քոչի, կորչի, գնա ինգիզի ու փրանցուզի յեր-կիրը»...

Հինդ հարյուր մանեթ... Կարմրավիլ Արտեմն աշքը բաց բաց հինդ հարյուր մանեթ տա՞... Զտա՞..., ինչ անի՞... Ո՞ւր գնա... Գյուղից քոչի: Ես ասենք քոչեց. ո՞ւր գնա... վո՞ր գյուղը կընդունի նրան... Ամեն

անդ ել Առբէրդային իշխանություն ե, ամեն տեղ ել գյուղիուրհուրդ կա, կոմսոմոլ կա, կոմբին կա, բատրակոմ կա, չքավորական խմբակ կա... Ասենք, ինչը քոչեց. Բալաբեղանց սաղ գեղն ե, և չի՞ կարող պոշից կապած տանիի... Հինդ հարյուր մանեթը վոր տա. Ինչն ել կդառնա մի աղքատ տնանիի մեկը... Պարտքը—թող Նիկոլայի փողով ընդունեն, գրեն հարյուրանոց կատինկեքը ծալած, իրար վրա դար-ած, ծովը-ծալին կտրում, մի քանիսի ծայրից ել մուկը կռծել ե, հին մուրհակների հետ միասին...

Արտեմը—գլուխն ի՞նչ քարով տա...

Կարմիր խողովակներն իրար վրա գասավորված պատ են կաղմել, հարյուրավոր բերաններով որատ: Առավոտյան ու յերեկոյան քամին շոյում ե նրանց: Պատը յերգում ե ինչ-վոր անորոշ մեղեղի, յերբեմն ել թում ե, թե խողովակները պատի յեղանակ են փր-չում:

Արտեմը լսում ե հեռվից այդ յերգը, գլուխը հու-սահատ որորում ու դառնադին անեծք մռմռում: Թը-վում ե, թե խողովակներն իրենց մշտաբաց բերանով շարունակ նույնն են կրկնում Արտեմի ականջին— «տո՛ւր... տուր»... Նրանք ել են պարտքն ուզում: «Մի քար չշրպրտե՞մ, ջարդեմ, ձենները կտրեն, — մտածում ե Արտեմը,— բա վոր իմանա՞ն... մահս ե..

— Եղքան փողը տալ չի մնի, — ասել ե Արտեմը գյուղիորհուրդի նախադահին, — յեկեք, իիդ ունեցեք, մի քիչ պակասեցրեք... Ակարը եղքանը վոր տամ, ել տակին բան չի մնալ, յե՛ս ել ձեղանցից մինը կդառնած: բա ես գեղում մի հարուստ ել չպետք ել լինի՞, վար կարիք յեղած ժամանակ նրա դուռը դնա՞ք.

— Մեկնից մեկը կդառնաս, ալելի լով, — պա-

ստասիսանել և նախազահը, — քեզ կընդունենք կովեկտիվի մեջ, ձայնդ ու իրավունքներդ կվերականգնենք, կդառնաս իսկական խորհրդային քաղաքացի:

— Ի՞նչ կլինի հիմի ընդունեք կովոզի մեջ...

— Կարողությունդ ամբողջ մեջ տեղ դիր, կեսն աղբուրին հատկացնենք, կեսը—կովոզ մտցնենք:

— Ետ հո՞... ե՛լի մի հաշիվ առուրս գալի... — տարակուսել և Արտեմը:

— Հրաման քեզ, մի հաշիվ...

* * *

Կենտրոնից «Ջրանտես» ընկեր և յեկել:

Զափ ու ձեւ ե անում ընկերը, վորոշում թե ինչ տեղով և հոսել ջուրը, ինչքան ծախս կնստի. քննում ե խողովակները: Ջրտնտես» ընկերը տեղը գծեց, նրաններ արավ, սախահաշիվ կաղմեց ու գնաց:

Սառն աղբյուրի ջուրը դեռ ևս թղթի վրա յե «Հոսում» դեպի գյուղամեջ, բայց նա, այդ տարիների յերազանքը, այդ սառն աղբյուրը, չուտով հոսելու յերապես:

Գյուղխորհուրդն ու կովոզը — անդամներին պարտադիր աշխատանքի յեն լծել: Խորհրդայնացման առաջին տարիներին հաճախակի գործադրվող, իսկ այժմ կարծես թե մոռացված, շաբաթորյակը կրկին մեջ տեղ յեկավ, շաբաթորյակը—կիրակնորյակ դառնալով:

Փորում են արխը:

Գյուղն այստեղ ե. սարալանջին: Կարմրավիզ Արտեմը չկա. աշխատանքին չմասնակցելու խայտառակությունից ազատվելու համար, ինչ-վոր պատրվակով զնացել ե հարեւան գյուղը: Մատների վրա կարելի յե հաշվել բացականերին, վորոնք Բալաբեգանց ցեղից են.

36

մի քանի աղամարդ. սակայն վո՛չ մի բացակա կի՞ն: Մինչև անդամ Բալաբեգանց բոլոր կանայք այստեղ են, ավելի յեռանդուն են կաել աշխատանքին:

Կատակներ, յերգեր, ծիծաղ...

— Խո՛րը քանդի, «Ջրտնտես» ընկերն ասաց կանավը խորը փորեցեք, վոր ամառը ջուրը չտաքանա...

— Հա՛, լավ ասում, խորը քանդի, վոր Արտեմի վիզը խորը թաղենք, թե չե գետնի յերեսը կընկնի, արկը կըդաղի, մեղք ա...

— Բալաբեգանց կնանցին ասեցեք, ջուրը վոր տանեն տուն, իրանց մարդկանցը ջուր չտան...

Ես ջրովն եփած կերակրից չտան...

— Թող գնան առվիզը խմեն:

— Ախչի, Վարդիթեր, ձեռդ վոր սատանա ընկնի, թարս կնալնես, եղ վո՞նց ա չես կարում Արտեմին խելքի բերես...

— Եի անդամ ուրիշները թարս են նալնել, չեմ կարում ել աջ նալնեմ, — պատասխանում ե Վարդիթերը, Արտեմի կինը:

Ծիծաղում են:

— Ա՛րի մարդուցդ բաժանվի, կովոզ մտի, — կատակում ե կին կաղմակերպչուհին:

— Մազթաղ ջան, վախում եմ ուրիշ մարդ չճարհմ: Համ ե՛լ... շամ ե՛լ... շամ զոռ անում, քիչ ել խաթրով ժաժ եկեք, նա յել քեզ նման մի մարդ ա...

— Աջ թեքո՞ւմ, ընկերներ, աջ թեքո՞ւմ... — վուգելորված բացականչում ե կոմսոմոլ Արտոն:

— Աջ ու ձախ չեմ գիղալ, դուզ քանդի, դո՞ւզ...

— Գյուղը վորոշել ե կոպեկ չծախսի արխը փորելու համար, թեկուզ գործը քիչ ուշանա յել, ընկնի գարնան ղիմաց: Հավաքած զումարը — պետության հատ-

37

կաթրան դումարի հետ միասին՝ կթաթկի մյուս ժամանելը: Քար ու կիր ե հարկավոր, ցեմենտ ե հարկավոր, վոր ջրամբար պատեն: Ամեն կիրակի պարտաղիր աշխատանք ե հայտարարված մեծերի, իսկ պիտներ կոլլեկտիվն իր աղատ ժամերին փորիրում ե մատաղ ձեռներով, ինչքան կարողանում ե: Մի տեսակ սոցմբակցություն ե ինքնաբերաբար: Այսպես կոչված խոռվածներն ել են հաշտվել. գյուղի ամոթն ու նախատինքը տանելը հետ բան չե. մարդկային յերես ե, ինչքան ել պիստ լին՝ դարձյալ ամաչում ե, կարմը բում, մանավանդ, վոր աղբյուրը բոլորի համար ե, վոչ վոքից վոչ հող են խում» վոչ ապրանք:

Գյուղամիջում ցեմենտից ավազան—ջրանալ են շինում անասուններին ջուր տալու համար. թող նրանք ել իմեն սառն աղբյուրի ջրիցը: Դործը յեռում ե:

Ճկուտի վրա մարգեր են յերեվում. չորս բոլորը ցանկալատ ե, վորի ներսից դալար ցյուղեր կան տնկը-ված շարքով. բարդի և ուսի ցուղեր են: Մարդերի կողքերով ել կան շարված պտղատու, ազնվացեղ ծառերի ցյուղեր: Ապագա ծառուղին զծված ե: Նոր, կանոնավոր ձեմի այգի յե դառնալու հետագայում: Նոր բանջարանոց—պարտիզում նոր մարդեկ են աշխատում: Դպրոցի մանուկներն են դրանք, վորոնք ուսուցչի զեկավարությամբ, իրենց փոքրիկ մատներով շնուռ են իրենց պարտեղը:

Գյուղացիների գույնը պարզէ ե. աշխատացել են: Նոր յերգ են կապել կոլլեկտիվի վրա, յերգում են գոյլում: Յերգի մեջ հիշվում ե Կարմրավիզ Արտեմը, նրանից գանձած հինգ հարյուր մանեթը, հիշված ե նաև, թե ինչպես կոլլեկտիվը գյուղն ազատեց մարդացից: Կոլխոզի հեղինակությունը նվաճումներ ե

կատարում. այժմ ցատերն են դիմում տվել կոլլեկտիվ ժողովու համար:

Գյուղամիջում մի պատ կա կամարաձև, դույնբդույն քարերով պատած ճակատին, կարմրավուն լայն քարի վրա փորագրված ե յերկաթագրերով — «Լենինի անվան աղբյուր, բերլին 1930 թվին»: Արձանագրության տակ յերկու յերկաթե խողովակից ծորում ե զուրալ ջուրը: Կամարի մեջ տեղը՝ հնդաթե աստղն ե կարմիր ներկած, իսկ կողքերին — մուրճ ու մանգաղ և ցորենի հասկերից կապած մի խուրճ:

Կոլլեկտիվը ծավալում ե իր աշխատանքները:

Ճկուտն ու աղբյուրը կենդանի ապացույցներ են, ադիտացիայի սուր զենքերը: Խոսում են տրակտորի մասին, առարկող չկա. ով կասկածամիտ բան ե ասում,

աչքն են կոխում ճկուտն ու աղբյուրը:

— Համաձայն չե՞ս, մեզ հավան չե՞ս, ես գեղիցը բոչի, աչքներս նոր ա լիս գալի...

— ԶԵ, բան չեմ ասում. լավ բանին ո՞վ հակառակ կը լի, մենակ ասում եմ ել ավելի լավ լինի...

— Ուզում ես ել ավելի լավ լինի, մտի կոլլեկտիվ, կարողությունդ մեջ տեղ դի...

— Ամեն բան լավ ա, համա մեր պապական ադաթը քանդվում ա, հավատից ու կրօնից հեռանում ենք:

Պապական ադաթը մեր պապերն իրանց համար պիստ պահեցին ու հետները գերեզման տարան. ուզում ես, գնա, գերեզմանից հանի. թե մեռելը կապանա, ադաթն ել հետը... Սրան սոցիալիզմ կասեն:

— Բան չեմ ասում, ախպեր, ձեռ քաշի:

— Հա՞. ել լսենց բան չասես, լեզուդ պոնդովդ չունես:

— Կրակ ա, եկա մենակ հոսելը...



— Զե՞... ականջս քթիդ տակ գնեմ, մեջը հաղարու մի սարսաղությունով լցնես, վոր լավ ըլի, քու ուղածն ըլի'...

Գնամ փրանցուղի ու ինգլիդի պարտքը տամ, վոնց վոր կարմրավիդ Արտեմն ա ասո՞ւմ... Ի՞նչ եք մի քանի հոգի աշունքվա ճանճի պես տզտզում... Խոսակեցը հեռացավ քոռ-փոշման, իրեն-իրեն փընթինթալով... «Սավետական իշխանությունն ամեն մի դյադի բերնում հենց լեզու յա դրել, վոր հետները մեղմ զրից ել չի արգում»...

— Համա կարկատեցիր, հա՞...

— Բա վո՞նց գիղաս... Սաղ գեղը համարյա կուլեկտիվի մեջ ա մտել, պրծել, ես մի քանի հոգին խալխի միտքը պղտորում են...

— Ասում են Արտեմն ել ա դիմում տվել, վոր կուլող մտնի, խելքդ ի՞նչ ա կտրում...

— Լավ կանի. կնկա հունարը կըմի. կնիկը մեղ հետ ա...

— Բա վոր մտնի ու... ներսից ուզի խանգարի...
— Քոռ ե՞նք... հալա թող փորձի'...

— Ի՞նչ կանեք...

— Սոցիալիզմի ական տակը կդցենք, ջանը կհանենք... Ով վոր կուլեկտիվի գործը խանգարի, կամ ուղենա խանգարի, կրաքարկենք իրան պապի ծոցը...

Սրան—սոցիալիզմի կարուցում կասեն, հանաք բան չգիտենաս...

«Ազգային գրադարան



NL0314000

ЧДБ 13 401.

27433

147-1931/р.



М. Дарбенян.

Б о в о г а

Госиздат ССР Армении
Эреван

1931